Ազգ

Azg

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1995. ՇԱԲԱԹ # 237 (991)

Պերեսը խոստանում է ազատ արձակել 1000 պաղեստինցի բանտարկյալ

ԳԱԶԱ. 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ. RFI, WSJ- Իսրայելի վարչապետ Շիմոն Պերեսը այսօր առավոտյան հանդիպում ունեցավ Պաղեստինի ազատագրական կազմակերպության ղեկավար Յասեր Արաֆատի հետ եւ քննարկեց Արեւմտյան ափում պաղեստինյան ինքնավարության ընդարձակման ծրագրերը: Ոռոմես բարեկամեցողության նշան նա խոստացավ իսրայելական կալանավայրերից ազատ արձակել պաղեստինցի 1000 քաղբանտարկյալ: Շիմոն Պերեսը նախորդ օրը Կահիրեում հանդիպել էր նախագահ Հոսնի Մուբարաքին:

Եգիպտոսի նախագահին նա խոստացել է հետաքննել 1956 եւ 1967 թթ. արաբ-իսրայելական պատերազմների ընթացքում հրեա զինվորների կողմից եգիպտացի պատերազմական գերիների սպանության մասին զեկուցումների հավաստիությունը: Կահիրեում գտնված միջոցին նա հայտարարել էր նաեւ, թե մտադիր է «նոր էջ» բացել Սիրիայի հետ բանակցություններում: Սիրիայի նախագահ Ասադը առաջիկա շաբաթ այցելելու է Կահիրե, մինչ Շ. Պերեսը վաղը կմեկնի Մարոկկո եւ տեսակցություն կունենա Հասան 2-րդ թագավորի հետ: ■

ԵՐԵՎԱՆ

ԱՄՆ-ի դեսպան Պիտեր Թոմսոնի այցը ՀՌԱԿ գրասենյակ

Դեկտեմբերի 8-ին ՀՌԱԿ հանրապետական վարչության գրասենյակում ՀՌԱԿ ՀՎ ատենապետ Ռուբեն Սիրզախանյանը, ՀՌԱԿ ՀՎ անդամներ՝ «Պայքար» ամսագրի գլխավոր խմբագիր Հարություն Կարապետյանը եւ Համլետ Դալլաքյանը հանդիպում ունեցան Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Պիտեր Թոմսոնի հետ:

Կուսակցության ատենապետը շնորհավորեց պարոն Թոմսոնին Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններին անցնելու կապակցությամբ եւ հաջողություն մաղթեց նրա առաքելությանը:

Մոտ մեկ եւ կես ժամ տեւած զրույցի ընթացքում Ռ. Սիրզախանյանը հանգամանորեն ներկայացրեց կուսակցության գաղափարախոսության ուսումնասիրման եւ տարածման հարցեր, ինչպես նաեւ՝ բազմակուսակցականության, ազատ մամուլի տեղն ու դերը խաղաղաշական հասարակության կայացման գործընթացում, ոչ պետական լրատվական եւ այլ միջոցների վիճակը տուկայական հարաբերությունների կայացման առդի փուլում եւ բազմաթիվ այլ հարցեր:

Զրույցին մասնակցում էր նաեւ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության երկրորդ քարտուղար պրն Սայմ Սմելլոնը: Զրույցն անցավ անկեղծ եւ ջերմ մթնոլորտում:

ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Պիտեր Թոմսոնի հետ:

Հանդիպման ժամանակ արծարծվեցին նաեւ ռամկավար ազատական գաղափարախոսության ուսումնասիրման եւ տարածման հարցեր, ինչպես նաեւ՝ բազմակուսակցականության, ազատ մամուլի տեղն ու դերը խաղաղաշական հասարակության կայացման գործընթացում, ոչ պետական լրատվական եւ այլ միջոցների վիճակը տուկայական հարաբերությունների կայացման առդի փուլում եւ բազմաթիվ այլ հարցեր:

Զրույցին մասնակցում էր նաեւ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության երկրորդ քարտուղար պրն Սայմ Սմելլոնը: Զրույցն անցավ անկեղծ եւ ջերմ մթնոլորտում:

Թմրաբիզնեսի դեմ պայքարը կարճաժամկետ արդյունք չէ

Դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ թմրաբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նիստը: Հայաստանի նախագահի հրամանագրով 1993 թ.-ի դեկտեմբերին ստեղծված կառույցի խնդիրն է միավորել ջանքերը արմատախիլ անելու հասարակության համար վտանգավոր այս երեւույթը: Ներկայումս հանձնաժողովի գործունեության կոորդինացնող դերը հանձնարարված է հանրապետության ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանին, որի նախագահությամբ էլ անցավ առաջին նիստը: Հանրապետության թմրադարդության մասին հաղորդում տվեց ներքին գործերի փոխնախարար Հովհաննես Հունանյանը: Քննարկվեցին հանձնաժողովի աշխատակարգի հարցերը: Վ. Սիրադեղյանը նշեց հանձնաժողովում երեսգործկոմի, բանակի, երկրաբարժի գոտու մասնագետ հոգեբաններին ներգրավման կարեւորությունը: Ըստ նրա արդեն հունվարի վերջին պետք է սահմանվի մոտակա ժամանակաշրջանի կոնկրետ միջոցառումների ծրագիրը: Սա ոչ թե կարճաժամկետ արդյունք է, այլ լուրջ բազմանպատակ աշխատանք դրա հաջողության համար որոշակի ֆինանսական միջոցների ներգրավմամբ, նշեց ՆԳ նախարարը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մաս լինելով՝ անկախ չես լինի

Առաջին կիսապաշտոնական արշավանքը ՀՅԴ հայտարարության վերաբերյալ

Մեր թերթի նախանցյալ համարում հրապարակել էինք ՀՅԴ 26-րդ ընդհանուր ժողովի հայտարարությունը, որտեղ բարձրացված էին այդ կուսակցության ընդհանուր դիրքորոշումներն ազգային-քաղաքական գլխավոր հարցերի, ինչպես նաեւ Հայաստանում նրա գործունեության հեռանկարների ու բովանդակության մասին: Այսօր հրապարակում ենք պետական լրատվական գործակալության Արմենպրեսի նյութը, որը, փաստորեն, պատմական առաջին անդրադարձն է ՀՅԴ-ի հայտարարությանը: Միայն թե, որքան էլ որ Հանրապետական կուսակցության ղեկավար պրն Աշոտ Նավասարդյանը ներկայումս գտնվում է «Հանրապետություն» բլոկում, ավելի նպատակահարմար պիտի լիներ, կարծում ենք, եթե Արմենպրեսը դիմեր իշխանության ներկայացուցչի, որպեսզի տեղյակ լիներինք ՀՅԴ-ի գործունեությանը կապված մարմինների բուն կարծիքին: Ինչեւէ: Այս առթիվ ընթերցողներին հանձնարարում ենք ծանոթանալ նաեւ ՀՅԴ 26-րդ ընդհանուր ժողովի մասնակից, գրող եւ հրապարակախոս Ալվարդ Պետրոսյանի տպավորություններին, 2-րդ էջում:

Արդեն տարիներ շարունակ իր ընդհանուր ժողովներում ՀՅԴ-ն օրակարգի հարցերից «վեր է դասում մեր ազգային միասնականության անհրաժեշտությունը»՝ «Մեկ ազգ, մեկ հայրենիք» սկզբունքով եւ «օրակարգի հիմնական առանցք» է դիտում «Դեղի երկիր» կարգախոսը որպես «արեւելման ու հայրենի հողի վրա կազմակերպության լիարժեք վերընձյուղման առնչվող քաղաքական ու կազմակերպական» հիմնահարց:

Քաղաքական գործընթացներին հետեւողները հասկված են կարծելու, որ եթե ՀՅԴ-ի համար ազգային միասնականությունը լիներ ավելին, քան փիլիսոփայական կատեգորիան, եւ «Մեկ ազգ, մեկ հայրենիք» ու «Դեղի երկիր» դրույթները չլինեին զուտ հեղափոխական, նացիոնալ-սոցիալիստական կուսակցություններին հատուկ կարգախոսային ձեւակերպումներ, հինգ տարիներ (ՀՅԴ-ի Հայաստանում բացահայտվելուց հետո) կրավականացնեին կուսակցության բոլոր անդամների ու կառույցների «Դեղի երկիր» ուղղվելուն եւ կուսակցությունը պետությունից, ազգից, հայրենիքից վեր չդիտելուն, այդ ամենը կերտողի բարդությամբ չտառապելուն:

Զարմանալի եւ առավել ես նորություն չէ ՀՅԴ-ի հայտարարության մեջ «քննադատությունը» Հայաստանի իշխանությունների հասցեին: Նորությունն էր, որ կուսակցությունը Լիբանանում գումարած 26-րդ ընդհանուր ժողովում կարծես թե հրաժարվում է հեղափոխականությունից եւ կարծես թե երկակիություն է մտցնում իր գործելակերպում: Թեեւ հայտարարվում է, որ ՀՅԴ-ն միասնական կուսակցություն է, այնուհանդերձ նշվում է նաեւ ՀՅԴ Հայաստանի կազմակերպությունը: Այստեղ անշուշտ նկատվում է իր համար մտնելու հնարավորություն առնելու դրանք: Երբ ղեկավար մարմին հռչակվում է Գերագույն ժողովը, որի կողմից ընտրվում է գերագույն մարմին:

Տես էջ 2

ՀՅԴ-ն բացառում է իր առնչությունը «Դրոյի» կամ քրեական որեւէ այլ գործի հետ

Հայաստանում ձերբակալված եւ դատական հետաքննման ենթակա դաշնակցականների հարցի կապակցությամբ ՀՅԴ 26-րդ Ընդհանուր ժողովը դեկտեմբերի 8-ին հանդես է եկել հետեւյալ հայտարարությամբ.

ա. ՀՅԴ ոչ մի առնչություն չի ունեցել «Դրո» խմբակի կազմության եւ գործունեության հետ:

բ. ՀՅԴ գաղափարական եւ բարոյական արժեչափերը, նրա կազմակերպական կանոնները բացառում են քրեական բնույթ ունեցող որեւէ գործի հետ կազմակերպական որեւիցե կապ: ՀՅԴ դատապարտելի է համարում նմանատիպ ամեն մի գործունեություն:

գ. Այդպիսի գործունեությունը ՀՅԴ-ի հետ կապելու փորձերի ետեւում կանգնած են ուժեր, որոնք ձգտում են վարկաբեկել ու չեզոքացնել Հայ Յեղափոխական Դաշնակցությունը իբրեւ Հայաստանում քաղաքական դերակատարություն ունեցող կազմակերպության, ինչպես նաեւ խոչընդոտել Հայ դատի լուծման ուղղությամբ նրա կողմից տարվող աշխատանքները:

դ. ՀՅԴ որոշեցնում է առագացնել դատական գործընթացը եւ ազատ արձակել պատշաճաբար ձերբակալվածներին:

Ի լուր համայն հայ ժողովրդի ՀՅԴ 26-րդ Ընդհանուր ժողովը նաեւ հայտարարում է, որ Դաշնակցությունը անդրդվելի կերպով շարունակելու է իր դերը ի խնդիր ազգային շահերի հետապնդման, հայ պետականության ամրապնդման, Հայաստանում ընկերային արդարության աղահովման եւ Հայ դատի լուծման: ■

Վահան Հովհաննիսյանը ցուցմունք չտվեց

Վահան Հովհաննիսյանին՝ իբրեւ Աշոտ Աբրահամյանի գործով վկայի, երեկ ՀՀ գերագույն դատարան բերեցին խիստ գաղտնի: Անտեղյակ էին նույնիսկ նրա երկու փաստաբաններ: Իսկ մինչ այդ հայտարարվեց, որ «Դրոյի» դատավարությունը տեղի չի ունենալու ատենակալներից մեկի հիվանդության դատճառով: Դատավարությունը կրկին հետաձգվեց այս անգամ. կարծում ենք, ժողովրդի անցանկալի ներկայությունից ազատվելու նպատակ էր հետապնդում: Այնուամենայնիվ, Վ. Հովհաննիսյանը հրաժարվել է ցուցմունք տալուց. նախագահողին դատասխանելով, որ իրեն արդեն այնքան սի ծանր հոդվածներ են ներկայացվել, որ 196-րդ հոդվածը նախատեսված վկայի ցուցմունքներ տալուց խուսափելու համար, այլեւս չի կարող սարսափեցնել:

ՔՐԵԱԿԱՆ

110 հազար կեղծ դոլլարը ինչպես բերվեց Հայաստան

«Ազգ» օրաթերթը դեկտեմբերի 8-ի համարում տեղեկացրեց, որ 110 հազար կեղծ դոլլար է ներմուծվել Հայաստան: Մանրամասները պարզելու համար դիմեցինք ՆԳՆ ֆինչական վարչություն՝ գնդապետ Դեւոնդ Իսոիրյանին, որն էլ հակիրճ ներկայացրեց իրողությունը: Ազգությամբ հայ Վալերի Հրայի Մելոնյանը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է: Սեպտեմբեր ամսին եկել է Հայաստան ոմն յեյենի հետ, որի հետ ծանոթացել էր Մոսկվայում: Յեյենը (անունը ճշված չէ, քանի որ նախաքննության ժամանակ Վալերի Մելոնյանը տարբեր անուններ է տալիս. Ֆահրան, Վախրադ...) Մելոնյանին հայտնել է, որ բազմիցս եղել է Հայաստանում, ծանոթ է Մեղրիի մաքսատանը, կապեր է Իրանի քաղաքացիների հետ տարբեր տեսակի գործարքներ եւ առաջարկել է Մելոնյանին միասին գալ Հայաստան, որպեսզի նա բարգմանչի դեր



տանի՝ կեղծ դոլլարները իրացնելու համար:

Տես էջ 2

Քարիզ. Բանակցություններն սկսվեցին կառավարության եւ գործադուլավորների միջեւ

ՔԱՐԻԶ. 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ. RFI, WSJ: Վարչապետ Ալեն Ժյուպեն երկրում ստեղծված սոցիալական ճգնաժամը կարգավորելու նպատակով այսօր միջնորդ բանակցող նշանակեց, որն արդեն կեսօրից հետո ընդունեց գործադուլավորների կազմակերպություններից մեկի բանագնացներին: Մինչ այդ, երեկ, տրանսպորտի, էլեկտրականության, գազի, փոստի, հեռախոսի եւ ավիաչախտանողներին միացան նաեւ ուսուցիչները: Արհմիությունների կողմից կազմակերպված ցույցերն արդեն համեմատվում են 1968 թ. ուսանողական հայտնի ցույցերի հետ:

Ելցինի առողջարանը կարանտինի մեջ

Երեկ «Բարվիխա» առողջարանում, որտեղ հերթական անգամ իր բուժընթացն է անցնում Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը, գրիպի դատճառով հատատվեց կարանտին: Խիստ նեղացվեց նախագահի հետ շփվող անձանց շրջանակը: Ներկայումս նախագահը դեպական նշանակություն ունեցող շատ հարցեր լուծում է հեռախոսով: Մոսկվայում հավատարմագրված արտասահմանյան որոշ լրագրողների կարծիքով «կարանտինը» կապված է Ելցինի ոչ բարվոք առողջության հետ: Մասնագետները կանխատեսում են, որ գրիպի համաճարակը գագաթնակետին կհասնի երկու շաբաթից:

Շարունակվում են ՏՈՒ-154 ինքնաթիռի որոնումները

Երկրորդ օրն է, ինչ շարունակվում են Հարավային Սախալինից խաբարովսկ չվերթի ժամանակ անհայտացած ՏՈՒ-154 ինքնաթիռի որոնումները: Սակայն եղանակի անբարենպաստ դատճառով դատանների հետեւանքով որոնումները արդյունք չտվեցին: Այդ աշխատանքներին Ռուսաստանի Դաշնության արտակարգ իրադրության նախարարության հետ համատեղ մասնակցում են նաեւ դատշտանության նախարարության ստորաբաժանումները, որոնց մասնագետների կարծիքով ինքնաթիռը շատ հավանական է ադեսի է ենթարկվել Հեռաբարական նեղուցում: Վերլուծելով վթարի հնարավոր դատճառները, մասնագետներն առաջ են քաշում երեք վարկած՝ ինքնաթիռի անսարքությունը, որի դատճառը կարող էր լինել նրա 20-ամյա շահագործումը, վառելանյութի կոմունիկի հոսքը եւ դատյությունը:

digitised by A.R.A.R.@

տեղական

ԱՆՐԱԳԻՐԸ

Մաս լինելով՝ անկախ չես լինի

Սկիզբը էջ 1

Ինչեւէ, ՀՅԴ 26-րդ ընդհանուր ժողովի հայտարարությունը լոզունգայնություն, գաղափարախոսական ոգի ոգանողականություն, գործելու մեխանիզմների որոշակի նորույթներ հակասություններով արձագանքվեց քաղաքական շրջանակներում:

- Հայտարարությունը՝ իբրեւ փաստաթուղթ, ընդհանուր առմամբ դրական եմ գնահատում, Արմենոյեսի բղբակցի հետ զրուցելիս ՀՅԴ 26-րդ ընդհանուր ժողովի հայտարարությանը այսոիսի բնութագրում տվեց Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ Ասոս Նավասարդյանը: Ինչ վերաբերում է դրա հիման վրա կուսակցության գործունեությանը, ապա, ըստ իս, դա մեկ այլ ոլորտ է, որի մասին հետագայում միայն կարելի է խոսել:

Դատողություններս հատկապես վերաբերում են հայտարարության վերջին մասին, որտեղ կետերով տրված են ծրագրի հիմնադրույթները: Բաղաքական առումով սոցիալական արդարության, անկախ, Հայաստանի ամրապնդման, տարածքային ամբողջականության համար ոգիները միանգամայն նորմալ երեւույթ է: Չնայած էական տեղաշարժ չկա կուսակցության գործելակերպում. ի վերջո, ՀՅԴ-ն նախկինում էլ նույն նպատակին էր հետամուտ: Շատ լավ կարգախոս է՝ «Մեկ ազգ, մեկ հայրենիք»-ը, եւ բնական է, որ ամեն ինչ պետք է միտված լինի դեպի ազգն ու հայրենիքը:

Սակայն ցավով պետք է նշեմ, որ կրկին կազմավորվեց քյուրդ, որի անդամները մեծ մասամբ ստիպուռֆահայեր են: Չգիտեմ, նրանք կտեղափոխվե՞ն Հայաստան, թե՝ ոչ: Պետականության վերականգնումից հետո բոլոր կուսակցությունները իրենց ղեկավար կազմով պետք է բնակվեն Հայաստանում, լինեն նրա քաղաքացիները: ՀՅԴ-ն հնամենի կուսակցություն է եւ բնական է, որ երկար ժամանակ գործելով ստիպուռում եւ հսկայական կառույցներ ունենալով այնտեղ, չէր կարող միանգամից ամեն ինչ թողնել ու վերադառնալ հայրենիք: Ես դա տեսնում եմ իբրեւ ընթացող երեւույթ, որը ժամանակի հետ կլուծվի: Չնայած ստիպուռին էլ իր պահանջները հոգացող կուսակցություն է անհրաժեշտ: Հայաստանյան կազմակերպության կառույցին նույնպես դրականորեն եմ վերաբերվում: Սակայն այդ դեպքում անհասկանալի են Քյուրդի անելիքները. մեկ միասնական կառույցի մեջ ինչպե՞ս կարելի է լրիվ անջատ գործել: Իշխանության համար կուսակցության պայքարը նորմալ եմ համարում, առավել գովելի է բոնությամբ իշխանության փոփոխությանը դեմ լինելու ՀՅԴ-ի դիրքորոշումը: Հայաստանում իշխանության ցանկացած փոփոխություն պետք է լինի ժողովրդավարության ճանապարհով:

Ըստ իս, ոչ միայն առանձին գործիչներ, կուսակցություններ, այլ ամբողջ ժողովուրդը կցանկանար մեր հայ քաղաքական ուժերի խնամքարում այս կուսակցությունը արդիականացված տեսնել:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՄԱՌՈՏ

Վարչապետն ընդունեց Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցչին

Երեկ վարչապետ Հրանտ Բագրատյանն ընդունեց Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Ալեխան Հարությունյանին: ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից տեղեկացանք, որ հանդիպման ժամանակ, որին ներկա է եղել նաեւ ՀՀ տարածքային կառավարման նախարար Ռուբեն Բարսեղյանը, անդրադարձ եղավ նաեւ ԼՂՀում իրականացվող տնտեսական բարեփոխումների ընթացքին, ֆինանսական եւ հարկային քաղաքականության սկզբունքներին: Քննարկվեցին նաեւ առեւտրատնտեսական համագործակցության հարցեր:

Դասագրքերի հրատարակման համար անհրաժեշտ գումարներ չկան

Միանգամայն հավաստի աղբյուրից տեղեկացանք, որ եկող ուսումնական տարվա համար անհրաժեշտ 4,8 միլիոն ընդհանուր տպաքանակով դասագրքեր հրատարակելու համար միջոցներ չկան: Արդեն այժմվանից ՀՀ գիտության եւ կրթության նախարարությունը խիստ մտահոգված է դասագրքերի տպագրության ծախսերը հոգալու խնդրով: Չի բացառվում, որ այդ նպատակի համար հարկ լինի դիմել Հայաստանի եւ սփյուռքի բարեգործների օգնությանը:

ԱԺՄ-Ն գումարում է արդեն իր 6-րդ համագումարը

Դեկտեմբերի 9-10-ը Երեւանում կկայանա Ազգային ժողովրդավարական միության (ԱԺՄ) 6-րդ համագումարը: Համագումարում կլսվեն ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանի եւ վարչության հաշվետվությունները: Պատգամավորները կքննարկեն հանրապետությունում ստեղծված սոցիալ-քաղաքական իրավիճակին վերաբերող խնդիրները, ինչպես նաեւ ԱԺՄ կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու հարց: Կանցկացվեն կուսակցության նախագահի եւ վարչության նոր կազմի ընտրություններ:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

110 հազար կեղծ դոլլարը...

Սկիզբը էջ 1

Սեպտեմբերին եկել են Երեւան: Երեւանում չեչենը 2-3 օր մնացել է «Արմենիա» հյուրանոցում եւ կապի մեջ մտել Իրանի քաղաքացիների հետ: Այնուհետեւ 90 հազար ամերիկյան կեղծ դոլլար թողնելով Մելֆոնյանի մոտ ասել է. «Ես շատ մեկնում եմ Մոսկվա, սեպտեմբերի 23-ին դու կգնաս Մեղրի, մախասան մոտ Ֆեզ կմոտենա Ֆահրադ անունով Իրանի քաղաքացի եւ կտա 45 հազար դոլլար, իսկ փոխարենը դու նրան կտաս 90 հազար կեղծ դոլլար: Գումարը կդառնա ֆեզ մոտ: Լրացուցիչ հեռախոսով կհայտնեմ ինչ անես, երբ եւ ինչպես գաս Մոսկվա»:

Սեպտեմբերի 23-ին Մելֆոնյանը, ինչպես նախատես պայմանավորվել էր, գնացել է Մեղրի, մեկ օր այնպես ասած հերթապահել է մախասան մոտ, սակայն ոչ ոք չի մոտեցել, այսինքն, գործարքը չի կայացվել: Անարդյունք վերադարձել է Երեւան, հանդիպել իր վաղեմի ծանոթին Շարենցավանի բնակիչ Սաղաթել Սիմոնի Թովմասյանին, որին նախկինում 3700 դոլլարի պարտք է ունեցել: Պարտքի դիմաց առաջարկել է 20 հազար կեղծ դոլլար: Սաղաթել Թովմասյանը համաձայնել եւ վերցրել է: Այդ ընթացքում չեչենը զանգահարել է Մոսկվայից եւ տեղեկանալով, որ գործարքը չի կայացվել, խորհուրդ է տվել պահել այդ դոլլարները եւ սպասել լրացուցիչ զանգի:

Մելֆոնյանն էլ հետեւելով խորհրդին, դոլլարները թաքցրել է բարեկամի տանը:

Սաղաթել Թովմասյանն էլ իր հերթին Մելֆոնյանից ստացված կեղծ դոլլարների համար սկսում է գնորդներ փնտրել եւ հենց այդտեղ էլ ծուղակն է ընկնում:

Հարուցված է քրեական գործ, կան բազմաթիվ չլուսաբանված հարցեր, իսկ քրեական օրենսգրքի 133 հոդվածի համաձայն, նախաքննության տվյալները լրիվ ծավալով արգելված է տպագրել, ուստի եւ մեզ չհաջողվեց առավել մանրամասներ պարզել:

Քրեական օրենսգրքի 82 հոդվածի առաջին մասով Վալերի Հրաչի Մելֆոնյանին եւ Սաղաթել Սիմոնի Թովմասյանին մեղադրանք է առաջադրվել, որի համաձայն 3-15 տարի պատիժ է սահմանված: Այն հարցին, թե ի՞նչ խորհուրդ կարող է տալ ընթերցողին, ինչպես արբերել կեղծ դոլլարը իրականից, գնդապետ Ղեւոնդ Իսպիրյանը պատասխանեց. «Միանշանակ այսպես չեմ կարող ընթերցողին խորհուրդ տալ, բայց տվյալ դեպքում դոլլարի կեղծումը ակնհայտ էր: Թուղթը սովորականից հաստ էր եւ ոչինչ, չկային ջրային արբեռանշանները, վերեւի մասի գրվածքերը հարթ էին»:

Խմբագրության կողմից ավելացնենք, որ կեղծ դոլլարները իրացնող անձանց հետ ծփված մարդիկ պետք է դիմեն ՀՀ ՆԳ ճնշական վարչություն:

ԱՐԱԲՅԱՆ ԱՆԴՐԵՅԻ,

Պարզ սերնդափոխություն պարկեշտ փոխանցումով

Բեյրութում տեղի ունեցած ՀՅԴ 26-րդ Ընդհանուր ժողովին Հայաստանից ընտրված պատգամավորներից բացի, իբրեւ հրավիրյալ մասնակցում էր նաեւ արձակագիր, հրապարակախոս, նաեւ ՀՕՄ-ի Հայաստանի շրջանային վարչության ատենադեսուհի Ալվարդ Պետրոսյանը: Ընդհանուր ժողովի կողմից ընդունված հայտարարությանը հասարակությունն արդեն լավատեղյակ է, բայց ոչ գոհացած: Բազում հարցեր դեռեւս իրենց պատասխանն են փնտրում: Համոզված չենք թե այս հարցազրույցը կբավարարի բոլորի հետաքրքրությունը, սակայն կարծում ենք, որ իբրեւ գրողի նրա տպավորություններն որոշակիորեն կգոհացնի հարցասերներին: Զրույցը սկսեցինք դաշնակցականներից մեկի մամուլից արդեն հայտնի հետեւյալ պատկերավոր նախադասությամբ. «Դաշնակցությունը նման է բյուրեղապակյա սափորի, որը յուրաքանչյուր Ընդհանուր ժողովի սեմին փշրվում, սակայն Ընդհանուր ժողովն ավարտվում է վերակերտելով այդ գեղեցիկ սափորը»:

– Այս ժողովը վերակերտե՞ց փշրված սափորը:

- Բանաստեղծական նախադասություն է, այս ժողովում մենք կերտեցինք մեր բարոյական եւ գործնական դիրքորոշումների հստակությունն ու մաքրությունը: Դա մեզ չխանգարեց, իհարկե ասելու, թե որտեղ ենք վրիպումներ ու թերություններ ունեցել, շատ լավ հասկանալով ու գնահատելով, որ հենց այնպես չեն ստեղծվել այդ վրիպումները: Ի վերջո, 70 տարվա ընդմիջումից հետո Դաշնակցությունն իր աներեր կարգախոսով ու տեսակետներով գալիս էր մի երկիր, որ կոչվում էր Հայաստան, մտնում էր մի ժողովրդի մեջ, որ կոչվում էր հայ ժողովուրդ, բայց բոլորովին տարբեր հոգեբանությամբ ու մտայնությամբ: Դրան ավելացրած նաեւ իշխանությունների երբեմն նույնիսկ ցավագին ազդեցությունը, որին հոգեբանական հակազդումը պետք է լիներ համարժեք: Բնականաբար, չէր կարող այստեղ պայքարներ չլինել, սակայն դա չի նշանակում, որ չէր կարելի խուսափել վրիպումներից: Պարզապես դրանք կարող էին շատ ավելի փիչ լինել, եթե իշխանությունները նույնքան կառուցողական դիրքորոշում ունենային հայ քաղաքական մտածողության նկատմամբ, որովհետեւ առանց այդ երանգաոլորտի ,ժողովրդավարական պետություն չի կարող կերտվել: Միայն առողջ ու հզոր մարմինը կարող է իրեն թույլ տալ հստակ խոսել սեփական արած-չարածի, սխալների ու վրիպումների մասին: Ընդհանուր ժողովում ես տեսա այդ առողջությունն ու հզորությունը: Շատ լավ գիտակցում ենք Հայաստանի արտաքին քաղաքականության պատկերը, ներքաղաքական իրավիճակն ու պետության կերտման դժվարությունները: Ուզում էինք մեր տեղն ու դերը մեկ անգամ եւս ամրակայել այդ գործընթացի մեջ:

– Դաշնակցությունը հայաստանցիներն ընկալում են իբրեւ խիստ գաղտնի կուսակցություն, ինչպես կբացատրեք նրա շուրջ ստեղծված խորհրդավորությունը:

- Ամենագաղտնի կուսակցությունը կոմկուսն էր, որի իրականությունը մենք նոր-նոր են ենք ծանոթանում: Դաշնակցությունը զուտ կուսակցություն է եւ նման գաղտնիություն չունի: Այս առաջադրանքը, որ մենք փակ կառույց ենք, մեզնից անկախ է ստեղծվել: Հիմնական պատճառն այն է, որ իր երկրում գործելու հնարավորություն չի ունեցել: Հայաստանում այդ բանը պետք է կարողանանք հաշվի առնել եւ պետք է կարողանանք ուղղել:

Մենք պարզապես օրինաչափ կուսակցություն ենք եւ մեր մտահոգությունների մասին ազատորեն կարող ենք արտահայտվել ընդհանուր ժողովում:

Ժողովը փաստեց, որ դեռի ժողովուրդ գնալու հարցում վրիպումներ ենք ունեցել, մտավորականության ահռելի պոտենցիալ ունենք, որը դի մեջ, որ կոչվում էր հայ ժողովուրդ, բայց բոլորովին տարբեր հոգեբանությամբ ու մտայնությամբ: Դրան ավելացրած նաեւ իշխանությունների երբեմն նույնիսկ ցավագին ազդեցությունը, որին հոգեբանական հակազդումը պետք է լիներ համարժեք: Բնականաբար, չէր կարող այստեղ պայքարներ չլինել, սակայն դա չի նշանակում, որ չէր կարելի խուսափել վրիպումներից: Պարզապես դրանք կարող էին շատ ավելի փիչ լինել, եթե իշխանությունները նույնքան կառուցողական դիրքորոշում ունենային հայ քաղաքական մտածողության նկատմամբ, որովհետեւ առանց այդ երանգաոլորտի ,ժողովրդավարական պետություն չի կարող կերտվել: Միայն առողջ ու հզոր մարմինը կարող է իրեն թույլ տալ հստակ խոսել սեփական արած-չարածի, սխալների ու վրիպումների մասին: Ընդհանուր ժողովում ես տեսա այդ առողջությունն ու հզորությունը: Շատ լավ գիտակցում ենք Հայաստանի արտաքին քաղաքականության պատկերը, ներքաղաքական իրավիճակն ու պետության կերտման դժվարությունները: Ուզում էինք մեր տեղն ու դերը մեկ անգամ եւս ամրակայել այդ գործընթացի մեջ:

– Դաշնակցությունը հայաստանցիներն ընկալում են իբրեւ խիստ գաղտնի կուսակցություն, ինչպես կբացատրեք նրա շուրջ ստեղծված խորհրդավորությունը:

- Ամենագաղտնի կուսակցությունը կոմկուսն էր, որի իրականությունը մենք նոր-նոր են ենք ծանոթանում: Դաշնակցությունը զուտ կուսակցություն է եւ նման գաղտնիություն չունի: Այս առաջադրանքը, որ մենք փակ կառույց ենք, մեզնից անկախ է ստեղծվել: Հիմնական պատճառն այն է, որ իր երկրում գործելու հնարավորություն չի ունեցել: Հայաստանում այդ բանը պետք է կարողանանք հաշվի առնել եւ պետք է կարողանանք ուղղել:

Մենք պարզապես օրինաչափ կուսակցություն ենք եւ մեր մտահոգությունների մասին ազատորեն կարող ենք արտահայտվել ընդհանուր ժողովում:

Ժողովը փաստեց, որ դեռի ժողովուրդ գնալու հարցում վրիպումներ ենք ունեցել, մտավորականության ահռելի պոտենցիալ ունենք, որը չկարողացանք գործածել եւ այն: Լուրջ խոսակցություններ եղան «Հայաստան» հիմնադրամի վերաբերյալ: Ես անձամբ գտնում եմ, որ պետք է կարողանանք վեր կանգնել նեղացածությունից եւ մասնակցել ազգային տարին: Ուրախ եմ, որ այդ մասին շատ բաց խոսվեց:

–Ինչպես կմեկնաբանեք «Առավոտի» երեկվա համարում ձեր կուսակցի «Բազեների եւ աղավնիների մրցամարտից հետո հաղթեցին աղավնիները» բնորոշումը:

- Շատ զարմացա Գ. Խուդինյանի կողմից նման բնորոշման համար: Ճիշտն ասած, ես ամենեւին էլ աղավնու նման չեմ, չգիտեմ ինչը նկատի ունի մեր սիրելի ընկերը: Ժողովում դաշնակցական մտքի ընտրյալներ էին հավաքված, շատ հետաքրքիր կառուցողական բանավեճ էր ընթանում, բայց բոլորը նույն մտահոգությունն ունեին: Մի դրամատիկ պահ կար՝ պարզ սերնդափոխություն էր տեղի ունենում եւ այնքան պարկեշտ էր այդ փոխանցումը, որ չեմ հասկանում ովքեր էին բազեներ, ովքեր աղավնիներ:" 26-րդ բնակմնային ժողով էր, որ ամեն ինչ սկսվում էր ազատ ու անկախ դեպքականության կերտումից եւ վերջանում էր դրանով:

– Ընդհանուր ժողովի նախագահական փուլում շատ էր խոսվում երկու Բյուրոների ստեղծման մասին իբրեւ ՀՅԴ-ն հայաստանյան օրենսդրությանը համապատասխանեցնելու տարբերակներից մեկի:

- Այդպիսի կարծիքներ կային: Ես այն մարդկանցից էի, որոնք կողմ էին մեկ ընդհանուր ժողով եւ մեկ Բյուրո տեսակետին, որը երբեմ գաղափարական տարանջատում չի ունեցել: Միշտ նույն կարգախոսներն են եղել: Բայց կազմակերպական առումով Ընդհանուր ժողովը գտավ ամենալավ տարբերակը դաշնակցության հայաստանյան կառույցի աշխատանքները կարգավորելու է Հայաստանի Գերագույն, ժողովի կողմից ընտրված Գերագույն մարմինը: Իսկ Բյուրոն ունենալու է իր հստակ սահմանված, համակարգող կազմակերպական դերը: Գերագույն մարմինը չենք ստեղծում իշխանությունները դուր գալու համար, կառուցվածքային փոփոխությունը մեր նոր իրավիճակով է պայմանավորված: Եկանք այդ հանգրվանին եւ հասանք նրան, որ այսուհետ գործելու ենք ոչ թե որպես սփյուռքյան, այլ նաեւ Հայաստան պետության մեջ գործող կուսակցություն: Ինչ վերաբերում է Գերագույն մարմնի ստեղծմանը, ծանոթ պատմությունից շարերը բեղեռեւ հիմնականում անտեսանելի մնացին, սակայն ներքին անորոշություն ստեղծվեց: Որպեսզի կարողանանք արժանավոր մարմին ստեղծել, շատողականություն չպետք է ցուցաբերենք:

Մենք երբեք չենք գնացել եւ չենք գնալու իշխանությանը բոնի տիրանալու ուղով, բայց եւ երբեք չենք դառնա խաղալիք իշխանության ձեռքին, որովհետեւ ժողովրդի համար ստեղծված կուսակցություն ենք. ժողովրդի խնդիրների համար էլ կդայքարենք ժողովրդավարական միջոցներով:

Նույն՝ գաղափարախոսության շուրջ համախմբվել է աշխարհասփյուռ հայության մի ոգջ զանգված, այդ է պատճառը, որ մեզ համարում ենք համահայկական գաղափարախոսությունը կրող կուսակցություն: Բայց որքան էլ բազմազան են տարբեր երկրներում գործող կառույցների առանձնահատկությունները, բոլորի մտահոգությունը նախեւառաջ Հայաստանն է ու հայ ժողովուրդը: Այդ է պատճառը, որ արտաքին քաղաքականության մեր դիրքորոշումն ամենից առաջ հաշվի էր առնում Հայաստանի աշխարհաքաղաքական շահը եւ ռազմավարական. եւ մարտավարական իմաստով. ի նկատի ունենալով մեր կապերը Ռուսաստանի եւ Իրանի հետ:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ,

Քառասուն հազար ավանդատուներ կորցրեցի՞ն իրենց գումարները

Հանրապետության խարված ավանդատուների մեծագույն մասը Երեւանի բնակիչներ են: Ինչպես Արմենոյեսի բղբակցին տեղեկացրին քաղաքի դատախազությունում, առնվազն 40 հազար քաղաքացիներ իրենց փողը վստահել են մարդկանց, որոնք բոլորովին էլ ի վիճակի չեն եղել ապահովելու ոչ միայն խոստացված տոկոսները, այլեւ վերադարձնել ներդրված ավանդները: Արդյունքում «Սուրբ Տաքեւ», «Կիլիկիա», JMZ, այլ բոնդալից անունների տակ քողարկված արկածախնդիրները ոլիի դատապարտան տան:

Համանման դեպքերի համար միայն Երեւան քաղաքի դատախազությունը հարուցել է 51 քրեական գործ, որոնցից 15-ի վերաբերյալ ժողովուրդները արդեն կայացրել են դատավճիռներ, այդ թվում մեղավորներից ոմանք դատապարտվել են մինչեւ 12 տարվա ազատազրկման:

Դատախազությունում միաժամանակ հայտնեցին, որ առանձին դեպքերում, եթե ամբաստանյալներ կամ նրանց հարազատներ հատուցում են բնակչությունից կորզած գումարները, ներվում են: Այդ եղանակով կարճվել է 6 գործ: Իսկ չարամտորեն խոսափողների նկատմամբ իրականացվում է հետախուզում. մի քանի ամբաստանյալներ բռնվել են այլ երկրներում ու բերվել Հայաստան դատապարտանքի ենթարկելու համար:

ՍՐՄԵՆՊՐԵՍ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Դանիելյանի 47
Թաղ. 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ, / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ,
ՍԱՄՎԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊՈՌԵԼ ԴԱԼԱԲԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

TACIS-ի հերթական ծրագրերից մեկի՝ «Աշխատանքային ծրագրի» շրջանակներում Սանկտ Պետերբուրգում անցկացված սեմինարին էին մեկնել Հայաստանի երեք ներկայացուցիչներ՝ «Արգիշտի» ՍՊԸ տնօրեն Ռաֆայել Դանիելյանը (ալրաղաց համալիրներ), «Արաֆս» գործարանի դուստր ձեռնարկության փոխտնօրեն Վահագն Ղազարյանը (կաթի համակարգի բաղադրային հեռախոսացանցի սարքավորումներ), «Էսսա» ՍՊԸ տնօրեն Ալեքսանդր Լեոնովը (արտահանում են չիր, հայկական հումք, ներմուծում՝ հյուրեր, հրուշակեղեն): Ծրագրի առաջին

– Չե՞ք կարծում, որ հիշյալ տարածքը կարող է դիտարկվել զուտ որպես նյութական բազա:

– Ռուսաստանի համար դա ընդունելի է: Բայց Հայաստանն այդպիսին դառնալ չի կարող: Հայաստանը զարգացող տուկա է: Գործարարությունը, կենսամակարդակը, գնողունակությունը վերջին տարիներին հանրապետությունում կտրուկ անկել են: Հայաստանն ունի արտադրական եւ գիտական ներուժ, եւ հայերն առարկայ ժողովուրդ են: Դրանից բացի, մենք ունենք բավականաչափ որոյն հումք, որը կարող է ունենալ միայն Հայաստանը: Ինչպես օրինակ, մրգերի տեսական արտերը, որոնց մշակությամբ մենք զբաղվում ենք: Համաձայն եմ, որ մեր տուկան հագեցած է բարդական ծիրանայրով, սակայն այն համով համեմատության ոչ մի եզր չունի հայկականի հետ, որարգարդես նրանց տեխնոլոգիաներ բույլ են տալիս մշակել մրգը այնքան հրաշալի, որը հաջողություն է առաջանում:

Տեխնիկական գիտվածության դրությունը եւ տեղափոխման բազմաբնույթ խնդիրները երկար ժամանակ փակուղու առջեւ կկանգնեցնեն բազմաթիվ ձեռնարկումներ: Ռ. Դանիելյանի կարծիքով այսօրվա դրությունները աշխատել են Հայաստանի ներուժը կազմող մասնագետներին զբաղվել ոչ իրենց գործով: Հայաստանի խոշոր ձեռնարկությունները չեն կարող ճկուն արձագանք տալ տուկայի բոլոր փոփոխություններին: Այդ դրությունով Եվրահամայնքի TACIS ծրագիրն օժանդակում է փոքր եւ միջին ձեռնարկությունների: «Սեմինարների նպատակը գործարարությանն ազատվելն է, եւ այդ հնարավորությունը մենք դիտում է կարողանանք օգտագործել»:

– Միջազգային տուկա դուրս գալու համար անհրաժեշտ է արեւմտյան գործարարության դրոշին ծանոթանալով ստեղծել սեփական ձեռագիր եւ նոր ուղիներ գտնել: Հայաստանում արդեն բազմաթիվ են այն ձեռնարկությունները, որոնք համագործակցության առաջին աստիճանին ոտք են դրել, բայց հետագա տեղաշարժը դեռ ձգձգվում է: Կա՞ Հայաստանում գործարարների այն խավը, որը փորձում է ստեղծել հայկական նոր բիզնեսի ձեւ համաշխարհային տուկայում սեփական դիրքն ունենալու համար:

– Այս ծանր ժամանակներում Հայաստանում չդադարելով արտադրել մենք օրինակ ենք այդ մարդկանց խմբի: Պետերբուրգյան եւ եվրոպական հանդիպումները չեն դադարելու գործել միայն եվրոպական ոճով: Ցեղնեռեցությունն դակաս երբեք չենք զգացել: Համաշխարհային փորձի լեզվի իմացությունը գումարելով

ՍԵՄԻՆԱՐ

Հայկական նոր բիզնեսը կծնվի գործարարության համաշխարհային փորձին տիրապետելով

փուլում Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկությունները ներկայացնող գործարարներն անցան անգլերեն լեզվի կատարելագործման դասընթաց: Աշխատանքային ծրագրին իր օգնությունը բերեց AFSME-ն (Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկությունների հիմնադրամ): Պետերբուրգյան սեմինարը ծրագրի երկրորդ փուլն էր, որի նպատակն էր մասնակիցներին ԱՊՀ երկրներից (մասնակցում էին նաեւ Ուկրաինայի եւ Մոլդովայի ներկայացուցիչները) ծանոթացնել արեւմտյան գործավարության ձեւերին եւ հասկացություններին: Դա կօգնի ճիշտ հասկանալ տուկայավարման գործընթացը, քանի որ ծրագրված է հաջորդ փուլում լինել եվրոպայում, ծանոթանալ նրանց աշխատանքին, հաջողությունների գաղտնիքին: Միաժամանակ ակնկալվում է կարողանալ եվրոպական համանման ֆիրմաների հետ:

Երեքաբաթյա դասընթացները վարում էին ֆրանսիական «Թոմսոն գրուպ» կազմակերպության, իսպանական «Պրոդեսս» կոնցեռնի, դանիական Փի Այ խորհրդատվական գործակալության աշխատակիցները: Լինելով խորհրդատվական ֆիրմաներ, նրանք միաժամանակ կօգնեն Հայաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի գործարարներին գտնել գործակիցներ: Ցեղնակությունները ներկայացրել են ծրագրեր, որոնց հիման վրա սեմինար վարող երկրների հանձնախումբը վերջնականապես կորոշի, թե ներկայացուցիչներից յուրաքանչյուրը որ երկիրն է այցելելու:

«Սանկտ-Պետերբուրգյան հանդիպումներն ինձ օգնեցին հասկանալ, որ մենք եվրոպային հարկավոր ենք նույնքան, որքան նա մեզ: Արեւմուտքն փնտրում է նոր տուկաներ: Իսկ նախկին ԽՍՀՄ տարածքը ներկայանում է որպես անընդունելի տուկա», ասում է Ա. Լեոնովը:

Մասնավոր եւ պետական ձեռնարկության համագործակցությունը արդյունավետ է

Խոսքը վերաբերում է «Նիկ» սահմանափակ դպրոցական ընկերության (ՍՊԸ) եւ Երեւանի մարթամասիկական մեքենաների գործարանի համագործակցությանը: Ինչպես լավ վերդերում կամ ֆիլմերում, Երեւանի Կամոյի դպրոցն ավարտած, դպրոցական մտերմությունը շարունակած 5 ընկերներ Ակտարյան երվանդը, Պապոյան էդուարդը, Սահակյան Ռաֆայելը, Սաֆարյան Արմենը, Ոսկանյան Լեւոնը միասնական ուժերով եւ միջոցներով 1992 թվից հիմնեցին «Նիկ» ՍՊԸ-ն, որն առ այսօր հաջողությամբ է գործում: Մոտ 1 տարի տեւած կազմակերպչական, նախապատրաստական աշխատանքներից հետո 1993 թվից սկսվեց «Նիկ» ֆիրմայի լվացքի մեքենաների արտադրությունը: Ցեղնակության տնօրենն է Ակտարյան երվանդը:

Հիմնադիրներից Սահակյան Ռաֆայելը եւ Պապոյան էդուարդը նշեցին, որ «Նիկ»-երը մշակված եւ ոչդրատված են ճապոնական լվացքի մեքենաների անալոգիայով, դիզայնով, կատարմամբ: Նրանց փոփոխություններ բերելու հետ կապված, որը տեսնելի է դարձնում եւ օգտագործումն էլ՝ հարմար: Տեխնոլոգիական փուլը մշակված է հիմնադիրների կողմից: «Նիկ» ՍՊԸ-ը վարձակալել է ԵՐՍՄ գործարանի տարածքը, որտեղ գործարանի աշխատակիցների ուժերով կատարվում են լվացքի մեքենաների հավաքման, փորձարկման աշխատանքները, գործարանի արտադրամասերում ոչդրատվում են տարբեր դետալներ: Այսպիսով ՍՊԸ-ն գործարանին առաջիկայում 30 աշխատանքով եւ որոշակի աշխատանքով:

ԵրՍՄ գործարանի արտադրության ոչ Ռազմիկ Մեժլումյանը եւ գլխավոր ինժեներ Եվգենի Սավոյկինը խոսեցին «Նիկ» ֆիրմայի հետ իրենց արդյունավետ միացյալ աշխատանքների եւ կարերի մասին: «Առեւտրամիջնորդական «Դվին» ֆիրմայի օգնությամբ լվացքի մեքենաները առավելում են Թուրքմենիա, դրանցով հետաքրքրվողներ կան նաեւ մեզ մոտ, որն օգնում է իրացմանը», ասաց Ե. Սավոյկինը: «Ընդհանրապես նման փոխշահավետ համագործակցությունը երկուսդ օգտակար է», ավելացրեց Ռ. Մեժլումյանը:

1993 թվի դեկտեմբերից մինչեւ օրս մոտ 4500 լվացքի մեքենա է արտադրվել, որից ավելի քան 3000-ը առաքվել է Թուրքմենիա, Հայաստան: Երկրորդ գագի դիմաց, մոտ 600 հատ Ռուսաստան է առաքվել, մնացածը ներքին շուկայում է իրացվել՝ ազատ վաճառքի ձեւով: Գինը եղել է սկզբում 30 դոլար, հիմա 50 դոլար է, սակայն խիստ բանկացած հումքի, դետալների (շարժիչ, հաղորդալար, ոռնիկներ խողովակ եւ այլն), արտադրական ծախսերի հետ կապված դժվար է ասել, թե մինչեւ երբ այն կդադարեցվի, որը մաքրելի է, մոտ ինքնարժեքին: Ցանկալի է, որ դրանք շուկայում 60 դոլարով են վաճառվում: Կարեւոր է այն հանգամանքը, որ լվացքի մեքենայի մոտ 50 դետալներից գրեթե 45-ը դրսից չեն գնվում, այլ արտադրվում են տեղում, իրենց հումքով եւ միջոցներով: 6 ամսվա երաշխիք ունեցող վաճառված մեքենաներից դեռեւս բողոքներ չեն եղել: Հիմնադիրները նշեցին, որ 1995 թվին արտադրվել է մոտ 2100 լվացքի մեքենա. լրացուցիչ դասվերներ դեռեւս արտադրությունը կընդլայնվի: Կարեւորն այն է, որ 20 տոկոսի չափով փայատեր 5 անձինք հիմնադիրները, գործում են համերաշխ եւ լի են եռանդով: «Նիկ» ձեռնարկության հիմնադիրները հեռանկարային ծրագրեր ունեն, 1996 թվականից դասրասվում են բողոքել ժողովրդական տնտեսության համար լայն սպառման էլեկտրատեխնիկական նոր սարքեր, որոնց մասին կխոսվի առանձին, արտադրվելուց հետո:

ԵՐԻՏԱ ՄԵՍԻՆՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Բացվեց ՀՀ կառավարման դպրոցի 1995-1997 թթ. ուսարին

Հակառակ նախապես հայտարարված, վարչապետը չկարողացավ ներկա գտնվել, սակայն ներկա էր եւ առաջին դասախոսությունը կարդաց ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, որի կողմից կառավարման դպրոցի 1995-97 ուսարվա բացման կոկիկ հանդիսությանը նախագահությունում տեղ էին գտել բարձրագույն կրթության եւ լուսավորության նախարար Վարդգես Գնունին, Հայաստանում Ֆրանսիայի դեսպան տիկին Ֆրանս դը Հարտինգը, դասընթացավարներ եւ այլ անձինք:

Անշուշտ, սա դպրոցի առաջին բացումը չէր, ինչպես իր ներածական խոսքում բացատրեց դպրոցի տնօրեն Խաչատուր Բեզիրջյանը: Պաշտոնական բացումը տեղի էր ունեցել դեռ 1994 թ. հոկտեմբերի 14-ին, հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի մասնակցությամբ: Փաստորեն սա դպրոցում երկրաչափ ուսուցման անցման առաջին օրն է, ուսուցման 3-րդ փուլի սկիզբը, երբ ունկնդիր 38 սաներ, որոնք մրցութային կարգով (70 դիմորդներից) ընդունվել են դպրոց, կստանան երկամյա տեսական կրթություն՝ հետագայում արդեն իբրեւ արհեստավարժ դասընթացներ հավաքելու մեր պետության տարբեր նախարարություններն ու գերատեսչություններ: Բոլոր երկրներում տեղի է ունենում պետական կամ քաղաքացիական ծառայողների դասրասում կամ վերադասրասում, ասաց Բեզիրջյանը, եւ Հայաստանում այս առաջին դպրոցը, եվրամիության կողմից հովանավորվող առաջին դպրոցն է նախկին Խ. Միության տարածքում: 2 տարի հետո այս ունկնդիր երիտասարդները կդառնան Հայաստանի առաջին պրոֆեսիոնալ պետծառայողները:

Ողջույնի ու հաջողության մաղթանքներով հանդես եկավ նախարար Վ. Գնունին: Նա խոստացավ, որ ամենաուշը մինչեւ առաջիկա փետրվար դպրոցը կօժտվի հարմարավետ շենքով (մեր ունեցած տվյալներով՝ Օրբելի փողոցի տեխնիկումի շենքը): ՀՀ կառավարության անունից նա շնորհակալություն հայտնեց եվրամիությանը, TACIS ծրագրին եւ հատկապես Ֆրանսիայի կառավարությանն ու Ֆրանսատանում նրա ներկայացուցիչ տիկին դը Հարտինգին՝ կառավարման դպրոցի կայացմանը մատուցած օգնության համար:

Խոսեց նաեւ տիկին դը Հարտինգը: «Ես չգիտեմ, ասաց նա՝ խոսքը ուղղելով սաներին, թե որտեղի՞ց եք գալիս դուք, բայց հստակ գիտեմ, թե ո՞ւր եք գնում»: Կարեւորելով այս դպրոցի դերը պետականության կայացման գործում, նա «պետականության զգացողություն» մաղթեց ուսանողներին:

Այնուամենայնիվ բարեմաղթանքի խոսքերով հանդես եկան ՀՀ Աժ գիտության, կրթության եւ երիտասարդական հարցերի հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Պապոյանը, որ նախագահն էր եղել ընդունելության հանձնաժողովի, Տասիս ծրագրերի կոորդինացման խաղերի նախագահը եւ Հայաստանում TACIS-ի մշակման ներկայացուցիչը: Այնուհետեւ ունկնդիր սաներին տվեցին ուսանողական տոմսեր:

Վերջում կուզենայինք կրկնել TACIS ծրագրերի կոորդինացիոն խորհրդի նախագահի՝ սաներին ուղղված խոսքերից հետեւյալը. «Դուք չպետք է ծառայեք քաղաքական մի կուսակցության, այլ ժողովրդին: Ընտրություն պետք է կատարեք, թե ո՞րն է լավագույնը ձեր ժողովրդի համար, ինքներդ պետք է հակված լինեք ազատորեն գտնելու ճշմարտությունը»:

Հույս ունենք, որ կառավարման դպրոցի սաները, առավել եւս ղեկավարությունն այս սկզբունքով կծառայեն մեր ժողովրդին, պետությանը:

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Լեւոն Զուրաբեանը այցելեց Բոստոն

Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի օգնական եւ մամուլի տնօրեն Լեւոն Զուրաբեանը, ընկերակցությամբ Ամերիկայի հայկական համագումարի հանրային հարցերու տնօրեն Մայլզ Մելոնեանի (ֆոյրը՝ Սոնքթ Մելոնեանի) Բոստոն այցելեց չորեքշաբթի նոյեմբերի 29-ին:

Բոստոնի մեջ յարգելի հիւրին այցելութիւնները ու տեսակցութիւնները ծրագրեց եւ համադրեց ՈԱԿ Արեւելեան Ամերիկայի եւ Կանադայի շրջանակի «Պայքար» հասարակութեան տնօրէն Միհրան Մինասեանը:

Պրն Զուրաբեան հանդիպումներ ունեցաւ Մեսեչուսեց նահանգի կառավարիչի տեղակալ Պոլ Սելուչիի հետ (նոյն պահուն կառավարիչ Ուիլիըմ Ուելդ սենատի ընտրութեանց իր թեկնածութիւնը կը յայտարարէր): Պրն Սելուչին փափաք յայտնեց յառաջիկայ գարնան Հայաստան այցելել Մեսեչուսեց նահանգի հետ տնտեսական յարաբերութիւններ մշակելու համար:

Պրն Զուրաբեան հանդիպում ունեցաւ տեղւոյն ամենաազդեցիկ (730 հազար տպաքանակ) «Բոստոն Գլոբ» օրաթերթի խմբագրական կազմին հետ, յատկապէս Դեյվիդ Գրինուէյի, որ հմուտ է Կովկասի եւ լատենեակ Հայաստանի եւ Արցախի հարցերէն:

Հայկական գաղութին մէջ Զուրաբեան այցելեց ՈԱԿ-ի կեդրոն, հանդիպում ունեցաւ Թէֆեան Մշակութային Միութեան, ՈԱԿ-ի պատասխանատու «Դը Արմինիըն Միրր Սփեքթեյթր» թերթի խմբագրական կազմին, Ս. Յակոբ եկեղեցւոյ հովիւին եւ Հայկական բանգարան-գրադարանի վարչութեան հետ:

Դեկտեմբերի 1-ին պրն Զուրաբեան ներկայ գտնուեցաւ ի պատիւ Մեսեչուսեց նահանգի ծերակուտական Ջոն Քերիի տրուած ընդունելութեան, Ալ-ոյեֆ Փափոյանցի տան մէջ:

Պրն Զուրաբեան Բոստոնէն մեկնեցաւ շաբաթ, դեկտեմբերի 2-ին:

ՔԹԱՅԱՐՑ

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ներդրումներին նվիրված գիտաժողով՝ 1996 թ.-ի մայիսին

Հայաստանի կառավարության եւ Ադամ Սմիթի ինստիտուտի համագործակցության արդյունքում դրամաշնորհավորվածություն է ձեռք բերվել 1996 թ.-ի մայիսին Երեւանում միջազգային գիտաժողով եւ ցուցահանդես կազմակերպել «Ինչու եւ ինչպես ներդրումներ կատարել Հայաստանում» թեմայով: Ինչպես տեղեկացանք ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից, այդ գիտաժողովի կազմակերպման հարցերի հետ զբաղվեցին վարչապետ Հրանտ Բագրատյանը եւ Մեծ Բրիտանիայի Ադամ Սմիթի՝ ինստիտուտի տնօրեն Մայք Բեյլին: Ադամ Սմիթի ինստիտուտը միջազգային համաբնույթ վայելող կազմակերպություն է, որը մասնագիտացած է տնտեսական բարեփոխումների ծրագրերի մշակման եւ իրականացման հարցերում: Ինստիտուտը մեծ փորձ ունի հաստատելու միջազգային համաժողովների կազմակերպման ընթացքում, որոնց ընթացքում արդյունավետ երկխոսություն է կարողանում բարձրաստիճան կառավարական դասընթացների եւ տարբեր երկրների գործարարշրջանների ներկայացուցիչների միջեւ: Այս տարի այդպիսի համաժողովներ են կազմակերպվել Ռուսաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, մերձբալտյան եւ այլ երկրներում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դարավոր գոյապայքարի հերոսական տարեգրություն

Անվանի գրող, հրապարակախոս եւ պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը, լինելով Արցախյան ազգային-ազատագրական շարժման սկզբնավորողներից ու կազմակերպիչներից մեկը, վերջին տասնամյակներում շրջադարձ կատարեց դեպի հայրենի պատմագիտությունը: Նա շատ վաղ կռահեց, որ ներկան կառուցելու համար հարկավոր է լավ իմանալ պատմությունը, անցած դարերի հերոսական տարեգրությունը: Նաեւ պատմական ազգային հիշողությամբ, կորովի նախնիների օրինակով, անցյալից իմաստուն դասեր քաղելով կարելի է ու անհրաժեշտ է զինվառել, ոգեկոչել ապրող ու մտառող սերունդներին: Այդպիսի ըմբռնումն էլ Բ. Ուլուբաբյանը հայ պատմագրությունը, հատկապես Արցախյան աշխարհի պատմության մանրագնին ուսումնասիրությունն ու ամբողջացումը դարձրեց իր գիտական, հասարակական-քաղաքական գործունեության հիմնական առանցքն ու ելակետը:

կեց 1918 թ. մայիսի դյուցազնամարտի հերոսական դրվագների վառ նկարագրությամբ առլեցուն «Սարդարապատ» պատմվեցը:

Բ. Ուլուբաբյանը միսումնավոր գրեց ու դժվարությամբ հրապարակեց այդ գիրքը, որպեսզի նրանից հերոսական ոգի եւ հայրենասիրական ներշնչանք ստանա Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում կռվող եւ իր հայրենիքը պաշտպանող հայ զինվորը:

Այդ բոլորին հաջորդեց տաղանդավոր գրողի ու պատմաբանի նոր գիրքը, որ լույս է տեսել վերջերս եւ կրում է «Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը» վերնագրությունը: 380 էջանոց այդ գիրքը հեղինակի բազմամյա եռանդուն աշխատանքի արդյունքն է: Բ. Ուլուբաբյանն առաջինն է, որ իր նոր երկում ընդգրկում է Արցախական աշխարհի ողջ պատմությունը, եւ գիտականորեն ներկայացնում ու քննարկում ազգային տեսանկյունից ինչպես համեմատաբար հայտնի, այնպես էլ ցարդ պատմության սվերում ու մութ անկյուններում մնացած շատ հարցեր:

Արցախը Պատմական Հայաստանի այն նահանգներից է, որի պատմության տարբեր կողմերին շատ են անդրադարձել հնագույն ու նոր, օտար եւ հայրենի բազմաթիվ հեղինակներ: Բայց նրանք լիովին չեն պարզաբանել Արցախի հարուստ ու կենսունակ պատմության բոլոր հարցերը, նրա պատմական ճանապարհի բոլոր անցուդարձերը: Իրավացի է հեղինակը, երբ գրախոսվող գրքի 8-րդ էջում ասում է, թե Արցախը, սկսած 5-րդ դարից, դրանից առաջ, շատ ավելի քան մեկ հազարամյակ գտնվել է Հայոց միասնական պետության կազմում, բաժանել է նրա ընդհանրական ճակատագիրը:

5-րդ դարից, Մեծ Հայքի միասնական թագավորության բարձունքից հետո (428 թ.) Արցախական աշխարհը դարձավ ամբողջովին պոկված ու իր առանձին, հազար ու մի փորձություններ հաղթահարող միավոր: Եւ ահա հետագա ավելի քան մեկ ու կես հազարամյակի Արցախի կենսագրությունն է, որ կազմում է գրախոսվող աշխատության նյութը, նրա հիմքն ու առանցքը: Այդ իմաստով էլ Բ. Ուլուբաբյանի նոր գիրքը Արցախական աշխարհի ամբողջական, համակարգված պատմության գիտական շարադրանքի առաջին փորձն է հայ պատմագրության մեջ:

Գրքի «Պատմաաշխարհագրական ակնարկ» բաժնում պատմաբանը ներկայացնում է Արցախի ընդգրկած տարածքը, որը, լինելով Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից կամ աշխարհներից մեկը, Հայոց պետականությունը մասամբ եզրագծում էր արեւելյան սահմաններում: Ներառելով բավական ընդարձակ մի տարածություն, այն արեւմուտքում հասնում էր մինչեւ Սեւանի արեւելյան ափերը, արեւելքում բռնում էր Մուխանի (այժմ՝ Սուղան) դաշտի զգալի մասը, հարավից սահմանակից էր Երասխ (Արաս) գետը, հյուսիսից՝ Արցախյան (նոր անունով՝ Ղարաբաղյան) լեռնաշղթան, որ Սեւանի ափից ձգվում է դեպի արեւելք ողնաշարելով Մուխանի դաշտավերջը: Հնագույն աղբյուրների տեղեկությունների (Պտղոմեոս, Ստրաբոն, Բուզանդ, Եղիշե, Խորենացի եւ այլք) հիման վրա ներկայացված է Արցախի հնագույն պատմությունը: Խոսվում է հնագիտական այն մասունքների (նախամարդու կենցաղային իրեր, քարե գործիքներ, ամենատարբեր կենդանիների ոսկորներ, նեանդերթալցու ծնոտի մի խոշոր բեկոր, քարանձավակոթողներ, դամբարանաբլուրներ, խեցեղեն, թաղված կառաներ եւ այլն) մասին, որոնք առաջացյալներն են «հոկանգնել հայոց գոյապայքարին եւ գտնել նրա հաջողության ուղիները: Գրքի 127-171 էջերը հենց այս շրջանի բարդ իրադարձություններն են վերլուծում ու քննարկում, ներկայացնում Խամսայի մելիքությունները, տանց կարերն ու առնչությունները ռուսական կայսրության հետ, Իբրահիմ խանի դեմ տարած անզիջում պայքարը, ռուս պարսկական պատերազմները: Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում 1813 թ. կնքված հաշտության պայմանագրով Պարսկաստանը մեկընդմիշտ ճանաչեց Ղարաբաղի հարավային սահմանից՝ Արաքսի ափից մինչեւ Դերբենդ ընկած տարածքի, ինչպես նաեւ Լոռու, Փամբակի, Շորագյալի, Շամշադինի ու Զանգեզուրի գրավումը Ռուսաստանի կողմից:

Մինչեւ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը Արցախ Ղարաբաղում մելիքական իշխանությունների կարգով փաստորեն պաշտպանվել են հայ պետականության բեկորները: Ի դեպ, այդ կարծիքին է նաեւ Բաֆֆին՝ հայոց հանճարեղ գաղափարախոսն ու պատմավիպասանը: Գրախոսվող գրքի հեղինակը սխալ ու անընդունելի է համարում այն պնդումը, թե «մեր ազգային պետականության բաղումը կատարվել է Կիլիկիայում, երբ 1375 թ. աշխարհի չարերի միահամուռ նախաձեռնությամբ հայ թագավոր Լեւոն Զ-ն գահազուրկ է արվել ու էվել տարագրության: Իբր, դրանից հետո շուրջ հինգ ու կես դար հայ ժողովուրդը ո՛չ պետականություն է ունեցել, ո՛չ էլ այն հիշեցնող որեւէ վարչական մարմին» (էջ 116):

Աշխատության հետագա էջերում դեպքերն ու պատմական իրողությունները համոզչորեն դիտարկվում ու քննարկվում են մինչեւ 1917 եւ դրանից հետո ընկած ժամանակաշրջանը, երբ բուրժուազիական այլանսով 1921 թ. հուլիսի 5-ին Արցախ Ղարաբաղը բռնակցվում է նույն այլանսով 1918-ին թխված Ադրբեջանի մուսավաթական հանրապետությանը, որը հետագա տասնամյակներում բաղում ու բացահայտ հայաթափում է Պատմական Արցախի գերակշիռ մասը, գիտաչորեն բզկտում ու ծվատում հնամենի էթնիկ երկրամասը, այն դարձնում աշխարհից կտրված մի կղզյակ եւ իր իսկ գծած սահմաններով օտարում իր մորից՝ Հայաստանից: Եւ այս ամենը ԽՍՀՄ սահմանադրության լենինյան ազգային ինքնորոշման իրավունքի մեծադղորդ կարգախոսի անվան տակ:

Գրքի հետագա երեք գլուխներում խոր վերլուծության ու քննարկման են ենթարկվում 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբների ու հետագա շրջանների պատմական քաղաքական անցքերը, մեր ժամանակի գոյապայքարը՝ ամբողջացնելով Արցախական աշխարհի զարմանահրաշ ու հերոսական տարեգրությունը: Մասնակի թերությունները բնավ չեն սվերում գրքի գիտական բարձր արժեքը: Աշխատության խոսուն ու տարողունակ վերնագրերը, գլուխների ու ենթագլուխների տրամաբանական անցումներն ու կամրջակները, մասերի ու ամբողջության համակարգված կառուցվածքը, գիտական ընդհանրացումներն ու եզրահանգումները, ոսկեղեն նիկ հայրենի շողարձակումները պատիվ են բերում վաստակաշատ գիտնականին ու գրողին, որի ծննդյան 70 ամյակը բոլորում է դեկտեմբերի 9-ին:

Ուրեմն՝ երկար կյանք, ամուր առողջություն եւ գիտական հետագոտական նոր սխրանքներ ցանկանք Արցախյան կանաչ աշխարհի պայծառ զավակին ու ազգի նվիրյալին եւ սպասենք մեր հերոս Ավարայրի պատմագեղարվեստական երկի երկունքին...

ՌԱՖԻ ՂԱԼԱԼԵՅԱՆ.

ԱՐՁՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Իջեւանի բենզոնիտն առանց հեռանկարի՞

Նախկին ԽՍՀՄ նավթաքիմիական արդյունաբերության նախարարության ինքնատիպ ձեռնարկություններից է Իջեւանի «Բենզոնիտ» կոմբինատը, որի մոտ հիմնվել է Ազատամուտ ավանը, ուր այժմ ապրում է 5000 մարդ: Գտնվելով Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանի ճիշտ եզրին, կոմբինատն ու բանավանը ենթարկվել են հակառակորդի հրետակոծություններին ու գնդակոծություններին, ունեն զոհեր եւ ավերածություններ: Ձեռնարկությունը վաղուց անգործության է մատնված, իսկ առագաստ անհայտ է: Այդ մասին է մեր թղթակից Ռուբեն Սիմոնյանի զրույցը կոմբինատի տնօրեն Վարդգես Հարությունյանի հետ:

– Ի վերջո բենզոնիտը դի՞տք է մեր հանրապետությանը:

– Բենզոնիտը հատուկ տեսակի կավ է, որի լվացող հատկությունը վաղուց է հայտնի: Մինչեւ օճառի մաքրելի դառնալը մեր հայրենակիցները բենզոնիտից, տեղական խոսվածքում «գիլ» է կոչվում, ջրախառն լուծույթ «ոով» են պատրաստել, դրանով լողացել եւ լվացք արել: Բացի այդ, ձեռներեց գյուղացիներն խրենց ավանակներ բարձած «գիլը» վաճառքի են հանել հարեւան բնակավայրերում, ընտանիք պահել: Խորհրդային նավթաքիմիական արդյունաբերության հետաքրքրությունը Սարի գյուղի հանդից արդյունահանվող հանքանյութի նկատմամբ բացատրվում էր նրանով, որ գործարանային վերամշակմամբ ստացված փոշին նավթի եւ գազի հանքավայրերի հորատման ժամանակ օգտագործվում էր որպես հորատաստարեր, պատկերավոր ասած, «յուղող» եւ հորատանցքերի պատերը ցեմենտող նյութ: Բացի այդ, բենզոնիտային կավը կարեւոր խրանիչ է մետաղածուլման բնագավառում, իսկ սենդարդյունաբերության մեջ ծառայում է որպես դարձեցնող միջոց: 1973 թվականին գործարկված ձեռնարկությունը նախագծային հզորության հասավ 1987 թվականին, երբ վերամշակվեց եւ արտահանվեց 470 հազար տոննա վոշի, այն ժամանակվա գներով 11 միլիոն ռուբլու արտադրանք: Ասվածից պարզ է դառնում, որ կոմբինատն իրացման հարցում կողմնորոշված է եղել դեպի խորհրդային հանրապետությունների տնտեսողներ, իսկ Հայաստանում անհնար բանակությամբ բենզոնիտ է տարվում:

– Նախկին գործընկերներն այլեւս հետաքրքրություն չի՞ն ցուցաբերում ձեր արտադրանքի նկատմամբ, չէ՞ որ նրանք աշխատում են:

